ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«08» 07 2022թ.
No 00335

«ՎԱՆ ՔԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Ամիրյան փ., 4/7)

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հուլիսի 6-ի ««Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 246-Ա որոշմամբ (այսուհետ՝ թիվ 246-Ա որոշում) հարուցել է թիվ ՀԳ-01488/22 վարույթը:

«Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով Ընկերությունը կարող է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր հարուցված վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ: Ընկերության հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով:

Տեղեկացնում ենք, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Ընկերությունը թիվ 246-Ա որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում Ընկերությանը վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին

միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով, ընդ որում, արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

3. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը: Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության համար բարենպաստ հանգամանքների ապացուցման բեռը կրում է Ընկերությունը:

4. Պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումն իրականացվում է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 395-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ:

5. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Կից ներկայացվում է թիվ 246-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «7» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Արմենուհի Թադևոսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (245)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 26 հուլիսի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հուլիսի 2022 թվականի թիվ 246-Ա

«ՎԱՆ ՔԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հուլիսի 6-ի նիստում, քննարկելով «Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 17-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 118-Ա հրամանի հիման վրա իրականացվել է «OneCard» բջջային հավելվածի արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 118 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 17-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 119-Ա հրամանի հիման վրա իրականացվել է «https://www.instagram.com/onecardinternational/» հղումով ինստագրամյան էջի արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 119 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 17-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 120-Ա հրամանի հիման վրա իրականացվել է «www.facebook.com/onecardinternational» հղումով ֆեյսբուքյան էջի արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 120 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 17-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 121-Ա հրամանի հիման վրա իրականացվել է յութուբյան էջի արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 121 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 17-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 122-Ա հրամանի հիման վրա իրականացվել է «onecard.am» կայքի արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 122 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 28-ի թիվ 129-Ա հրամանի հիման վրա իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 129 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 28-ի թիվ 130-Ա հրամանի հիման վրա իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 130 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 28-ի թիվ 131-Ա հրամանի հիման վրա իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 131 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 28-ի թիվ 132-Ա հրամանի հիման վրա իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 132 արձանագրությունը:

Վերոնշյալի և հասանելի այլ տվյալների հիման վրա պարզ է դարձել հետևյալը.

1. Ընկերությունը հրապարակում է մի շարք տեղեկություններ, այդ թվում՝ «Բեռնեք OneCard անվճար հավելվածը AppStore-ից և Google Play-ից, ստացեք օրական 1% հաշվի համալրում ամեն օր»,
2. Ընկերությունը մինչև 2022 թվականի մայիսի 15-ը առաջարկել է օգտահաշվում դրական շարժն ապահովելու դեպքում օգտատիրոջ դրական հաշվի մնացորդը յուրաքանչյուր օր ավելացնել օրական 1 %-ով,
3. Ընկերությունը նշում է մի շարք գործընկերների մասին, որոնց առաջարկած ծառայություններից օգտվելու կամ գնում կատարելու դեպքում վճարման պահին ներկայացնելով OneCard-ի QR կոդը կամ քարտի 8-անիշ համարը, օգտատերը կստանա քեշբեք, որին կհաջորդի օրական 1% համալրում օգտահաշվի դրական մնացորդին,
4. Ընկերությունը նշում է նաև, որ գործընկերների մոտ օգտատերերը կարող են վճարում կատարել հենց OneCard-ի օգտահաշվով,
5. Ընկերությունը նշում է հետևյալը. «Գնի՛ր հայկական առաջին էլեկտրոնային միավորը, մեծացրու՛ քո հնարավորությունները շնորհիվ «OneCard» ընկերության: Ստացի՛ր քո օգտահաշվում եղած միավորների մինչև 1%-ի չափով բոնուս ԱՄԵՆ ՕՐ՝ 12:00-ին: Դարձի՛ր օգտատեր և օգտվի՛ր բոլոր այն հնարավորություններից, որոնք ընձեռում է OneCard ընկերությունը: OneCard - Նոր ձևաչափ, նոր հնարավորություններ»,
6. Ընկերությունը հրապարակել է գովազդ, որտեղ նշվում է հետևյալը. «Կարողա ռիսկի գնամ և բիթքոին առնեմ … չեմ կարծում, որ դու այնքան բութ ես, որ բութքոին

առնես: (…): Ես քո կրիպտոուան հրեշտակն եմ և, եթե ուզում ես շատ արագ հարստանալ, ուրեմն հենց հիմա մտնում ես «OneCard» հավելված ու գնում ես մեծ քանակությամբ կրիպտոուան էլկտրոնային միավոր (….)»,

7. Ընկերությունը հրապարակումներ է արել այն մասին, որ 2019 թվականի հուլիսին ստեղծված Onecard ընկերությունը քեշբեք համակարգում դարձավ առաջատար: Լավագույն ընկերությունները դարձան «Onecard» գործընկեր, ինչը մեծացրեց այդ ընկերությունների հորիզոնները, և նրանք ձեռք բերեցին հազարավոր հաճախորդներ: 2020 թվականին «Onecard» ընկերությունը ստեղծեց իր առաջին՝ «crypotoOne» էլեկտրոնային միավորը, ինչը ցնցեց հայկական շուկան,

8. Ընկերությունը պնդում է, որ ունի հարյուրավոր գործընկերներ, որոնց մոտ QR կոդի ինդենտիֆիկացիայից հետո օգտատերը կստանա մինչև 20% քեշբեք,

9. Ընկերությունը հրապարակել է թվային ֆունկցիայի գրաֆիկ, որտեղ ցույց է տալիս, թե ինչպես է 1 000 000 CryptoONE-ը 30 օր հետո վերածվում և դառնում է 1 347 048 միավոր,

10. 2022 թվականի մայիսի 15-ից Ընկերությունը կատարել է փոփոխություն, և օգտատիրոջ հաշիվն ավելացել է ոչ թե կայուն 1%-ով, այլ՝ 0.1-1%-ի սահմաններում,

11. Կայքում գրանցվելու դեպքում, սեղմելով «ԳՐԱՆՑՎԵԼ» կոճակը և լրացնելով դաշտերը, պետք է հաստատել «ՊԱՅՄԱՆՆԵՐ» դաշտը, որտեղ հրապարակված է «Ծառայությունների մատուցման վերաբերյալ» հրապարակային օֆերտան» (այսուհետ՝ **Օֆերտա**): Օֆերտայի 2.4-րդ կետի համաձայն՝ առաջին անգամ Օգտատիրոջ անձնական օգտահաշվի համալրումից հետո, 29 օր շարունակ՝ մինչև 29-րդ օրը ներառյալ, յուրաքանչյուր օր որպես OneCard հավելվածի օգտագործման խթանման միջոց, Օգտատիրոջ անձնական օգտահաշվին պարտավորվում է հաշվեգրել նվազագույն մնացորդի նկատմամբ հաշվարկված 1%-ին համարժեք CRON (…): Օֆերտային 2.5-րդ կետի համաձայն՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված, Ընկերությունը կարող է անորոշ ժամկետով նվազեցնել սույն Օֆերտայի 2.4 կետում նշված խրախուսական միջոցների տրամադրման չափը՝ մինչև օրական 0.1 %,

12. Ընկերությունը նշում է, որ 1 CryptoOne = 3 դրամ: Համաձայն Օֆերտայի 4.2-րդ կետի օգտատերերը մեկ միավոր CRONE-ը գնում են 3 պայմանական արժեքով: Օֆերտայի 4.3-րդ կետի համաձայն՝ օգտատերերի կողմից «CRONE»-ի (CryptoOne) կանխիկացման դեպքում, մեկ միավոր «CRONE»-ը հաշվարկվում է մեկ միավոր, (օգտատերերը հավելվածի միջոցով կարող են կանխիկացնել բացառապես իրենց կողմից ձեռքբերված էլեկտրոնային միավորները և իրենց կողմից ստացած «Cash back» միավորները, իսկ 2.4-րդ կետով նախատեսված խրախուսման միջոցներն ենթակա օգտագործման հավելվածում),

13. «OneCard» բջջային հավելվածի (այսուհետ նաև՝ **Հավելված**) «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» էջում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի հուլիսի 5-ի դրությամբ օգտատիրոջ «OneCard» հաշվին առկա 100 միավորը յուրաքանչյուր օր

ավելացել է օրական 1%-ով: Օգտահաշվում 29 օրյա դրական շարժն ապահովելու դեպքում օգտատիրոջ դրական հաշվի մնացորդն շարունակել է ավելանալ օրական 1 %-ով: Սակայն 2022 թվականի մայիսի 16-ից օգտատիրոջ հաշիվն ավելացել է ոչ թե կայուն 1%-ով, այլ՝ 0.1-1%-ի սահմաններում, իսկ օգտատերերը մեկ միավոր CRONE-ը կարող են գնել 2 ՀՀ դրամով,

14. «OneCard» բջջային հավելվածի «ՄԵՐ ՄԱՍԻՆ» բաժնում Ընկերությունը, ի թիվս այլնի, նշում է, որ «OneCard» հավելվածում լիցքավորվող միավորները հավելվածում անվանվել են «Crypto One», որը չի հանդիսանում էլեկտրոնային փող, արժեթուղթ, բիթքոին կամ նմանատիպ վճարային միջոց,

15. Ընկերության գործընկեր «Կոֆեմոլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սկսել է համագործակցել Ընկերության հետ մոտ մեկ ամիս, հետևաբար վերջինիս համար «OneCard» հաշվում կուտակված միավորների օգտագործման պայմանները հստակ չեն,

16. Ընկերության գործընկեր անհատ ձեռնարկատեր Անժելա Ավետիսյանը ժամանակավորապես դադարեցրել են «OneCard» հաշվում կուտակված միավորներով գնում կատարելը, մինչև Ընկերության՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների հստակեցումը,

17. Ընկերության գործընկեր «Անգելարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2020 թվականի հունվարի 21-ին կնքված «Ծառայությունների մատուցման» պայմանագրով համագործակցում է Ընկերության հետ, սակայն փաստացի անհնար է «OneCard» հաշվում կուտակված միավորներով գնում կատարելը, քանի որ Ընկերությունը մինչ օրս մի շարք տեխնիկական խնդիրների պատճառով չի ապահովել վճարման և պայմանագրից բխող այլ պայմանների ապահովումը,

18. Ընկերության գործընկեր «Ագուլիս-Մեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը նշել է, որ Ընկերությունը պատշաճ չի իրականացնում 2020 թվականի մայիսի 7-ին կնքված «Ծառայությունների մատուցման» պայմանագրով նախատեսված պայմանները և փաստացի «OneCard» հաշվում կուտակված միավորներով հնարավոր չի լինում կատարել գնում,

19. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում առկա տվյալների համաձայն՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1000 ՀՀ դրամ,

20. ՊԵԿ տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 2020, 2021 թվականների և 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Ընկերության ակտիվների արժեքը կազմել է դրամ:

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության երկրորդ բաժնի կողմից Հանձնաժողովի նախագահին ուղղված 2022 թվականի հունիսի 30-ի թիվ ՄՊՀ-003142 զեկուցագրով Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով առաջարկվել է հարուցել վարույթ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից անտեղի՝ ոչ կոռեկտ, անպատշաճ համեմատություն կատարելն իր կողմից արտադրվող կամ իրացվող ապրանքների և այլ տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրվող կամ իրացվող ապրանքների միջև:

Գործում առկա և հասանելի այլ տվյալների համադրումից հետևում է, որ Ընկերության վարքագծում առերևույթ առկա են հասարակության մոլորեցման դրսևորմամբ և անտեղի համեմատության կատարմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որոնք, ի թիվս այլնի, առերևույթ դրսևորվում են հետևյալ կերպ.

1. Ընկերությունը Հավելվածում լիցքավորվող միավորներն անվանել է կրիպտոուան («CryptoOne»), այնինչ այն կրիպտոարժույթ չէ: Ավելին՝ Ընկերությունը հրապարակել է հետևյալ բովադակությամբ գովազդ. «Կարողա ռիսկի գնամ և բիթքոին առնեմ … չեմ կարծում, որ դու այնքան բութ ես, որ բութքոին առնես: (…): Ես քո կրիպտոուան հրեշտակն եմ և, եթե ուզում ես շատ արագ հարստանալ, ուրեմն հենց հիմա մտնում ես «OneCard» հավելված ու գնում ես մեծ քանակությամբ կրիպտոուան էլկտրոնային միավոր (….)».

2. Ընկերության կողմից հայտարարվում է, որ սպառողը կարող է իր հաշվի դրական մնացորդն ավելացնել օրական 1%-ով: Այնինչ հաշվի դրական մնացորդն ավելանում է ոչ թե 1%, այլ մինչև 1%-ով՝ մինչև 29-րդ օրը ներառյալ, որից հետո միավորների կուտակումը հնարավոր է միայն օգտատիրոջ կողմից դրական շարժն ապահովելու դեպքում: Ընդ որում, Ընկերությունը խոստանում է անձանց բավականին մեծ գումարներ վաստակելու հնարավորություն, մինչդեռ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1000 ՀՀ դրամ, իսկ Ընկերության ակտիվների արժեքը 2020, 2021 թվականներին և 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է դրամ.

3. Ընկերության կողմից հայտարարվում է, որ «OneCard» հաշվում կուտակված գումարը հնարավոր է կանխիկացնել, այնինչ կանխիկացնել հնարավոր է միայն օգտատիրոջ կողմից ձեռքբերված էլեկտրոնային միավորները և իր ստացած «Cash Back» միավորները.

4. Ընկերության կողմից մեկ «CryptoOne»-ի իրացման գինը սահմանված է 2-3 ՀՀ դրամ, այնինչ կանխիկացման դեպքում մեկ «CryptoOne»-ը համարժեք է մեկ ՀՀ դրամի, իսկ դրանց կանխիկացումը զուգակցվում է բարձր միջնորդավճարների գանձումով.

5. Ընկերությունը հրապարակել է, որ Հավելվածում կուտակված միավորներով օգտատերերը կարող են կատարել գնումներ Ընկերության գործընկերների մոտ, այնինչ գործնականում «OneCard» հաշվում կուտակված միավորներով գործընկերների մոտ գնում կատարել հնարավոր չէ:

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հուլիսի 6
Երևան